

## ՈՒՐՈՒԱԳԾԵՐ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏ- ՄՈՒԹԻՒՆԻՑ.

### ՇՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր գրականութեան սկզբում հայ մտքի ազգային ինքնուրոյն ստեղծագործութիւնն ամենից աւելի երևան պիտի գար բանաստեղծութեան մէջ: Բայց այստեղ հենց ամենից պահաս է երևում ինքնուրոյնութիւն և ազգային կեանք, որովհետեւ գրաւոր բանաստեղծութիւնը շարունակութիւն չի լինում անգիր բանաստեղծութեան. հին աշխարհական բանաստեղծութիւնը, որ դանում ենք մեր Վիպասանութեան և Առասպելաց երգերի մէջ, չի արժանանում գրական մշակութիւն կրելու: Մեր հին գրագէտ եկեղեցականը չէր կարող գնահատել այդ. ուստի և նոյն իսկ շատ քիչ տեղեկութիւն է տալիս նրա մասին, և եթէ նրանից օգտուում են, այդ էլ միայն պատմագիրները, առաջ բերելով մի գրական տեսակ, որ ձևով պատմութիւնն է, իսկ նիւթով ոչ պատմութիւն է և ոչ բանաստեղծութիւն: Եւ այս հասկանալի է, թէ ինչո՞ւ: Քրիստոնէութիւնն եկած էր այդ ամենը ոչ թէ մշակելու և զարգացնելու, այլ ոչնչացնելու և տեղը մի նոր հոգևոր կեանք ստեղծելու, նոյն իսկ աշխարհն ու երկրաւոր կեանքն ուրանալու յանուն երկնաւոր հանգերձեալի: Եւ այս ոչ միայն մեր մէջ, այլ և ամեն տեղ: Փաւստոս Բիւզանդը զայրանում է, որ մինչ հայերը, առմիկ ու ազնուական, քրիստոնէական վարդապետութիւնից բան չեն հասկանում, ընդհակառակն սիրում են իրենց վիպասանութեան և առասպելաց երկերը. «Դեպ երեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքնօտի մտացն՝ ի հնութիւն հեթանոսական սովորութեանց, բարբառօս խուժադուժ միտն ունելով»:

Քանի որ այսպէս թշնամական էր եկեղեցականի վերաբերմունքը դէպի երկրաւորն ու ազգային հին բանաստեղծութիւնը, որ բովանդակում էր շատ հեթանոսական բան, հին հաւատալիքներ ու կեանքի զուարթ աշխարհայեցողութիւն. — բնական է, որ նրա ստեղծած բանաստեղծութիւնը, ինչպէս և ընդհանրապէս ամբողջ գրականութիւնը, չէր կարող ծնուել բուն ժողովրդի կեանքից և կամ պատուաստուել ազգային ժողովրդականի վրայ: Նրա ոգևորութեան աղբիւրը չպիտի լի-

նէր հայ կեանքը, մեր հին առասպելն ու վէպը, այլ միայն ս. Գրքը: Այս պատճառով և մեր հին բանաստեղծութիւնը միայն կրօնական է, և նրա ու մեր հին ժողովրդական երգերի մէջ ոչ մի կապ չենք գտնում: Նա միայն մի փայլուն ու ճիշտ արտայայտութիւն է մեր նախնիքների կրօնական կեանքի և ոգևորութեան և ամենից պայծառ ցոյց է տալիս այն բաժանումը, որ առաջ է բերում բրիստոնէութիւնը մեր եկեղեցականութեան և աշխարհականութեան մէջ:

\*  
\* \*

Եկեղեցական բանաստեղծութիւնն ամենից առաջ մի օրհներգութիւն է, որ ընդհանուր եկեղեցու մէջ ծնուած և զարգացած է բրիստոնէական աստուածապաշտութեանը հանդիսաւորութիւն տալու համար: Առաջին բրիստոնէաները եկեղեցում հրէական սովորութեամբ Աստուծուն փառաբանում էին երգելով սաղմոսներ և ս. Գրքի մի բանի օրհնութիւններ, որոնք յետագայում ևս մնում են ժամերգութեան մէջ: Հասարակ ժամաւորն աստուածապաշտութեանը մասնակից էր լինում միայն կրկնելով ս. Գրքի երգերից ընտրոշ բառեր ու խօսքեր, կամ ցնծութեամբ ասելով՝ ալելուիա, ամէն, շնորհեա Տէր, Յիսուս Քրիստոս Տէր մեր, կեցո՛ Տէր, կեցո՛ և ողորմեա, Տէր ողորմեա, Քեզ Տեառնդ յանձն եղլցուք, Աստուծոյ յանձն, առաջի Քո Տէր ևլն: Ժողովրդի այս ձևի մասնակցութիւնը, ըստ Խոսրով Անձևացու<sup>\*</sup>), երկար ժամանակ մնացել է մեր եկեղեցում:

Կրօնական եռանդը սակայն ընդ միշտ բաւականութիւն չէր կարող ստանալ միայն հին երգերով և բացարանչութիւններով. ուստի յօրինւում են նոր երգեր, որոնք 4-րդ, հաւանորէն և 5-րդ դարերում եղել են դեռ մեծ մասամբ փոքրիկ կտորներ և իբրև յաւելւած ասուել են սաղմոսներից կամ ս. Գրքի օրհնութիւններից յետոյ: Այս նոր երգերն իրենց նիւթն առնում են Աստուածաշնչից, և սաղմոսների ու օրհ-

\*) Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի և կարգադրեալն Մովսէսի զիտնական վարդապետի. Յօրթագիւղ, 1840. եր. 6, 7, 12 ևլն. «Ձնոյն և ժողովուրդքն ասեն՝ Գեցո՛ Տէր»: «Եւ ասեն ժողովուրդքն միարան՝ ոչ թէ՛ տէր. այլ եթէ՛ շնորհեա տէր»: «Յայն՝ ձայն ողորմագին պաղատանաց և ժողովուրդն զհայցուածն միարանն ասելով՝ առհասարակ՝ Տէր ողորմեա»: «Եւ երկիր պազանելով տմկնեցուն, անդէն առ Պարգևատուն ասեն՝ Ըռաջի քա տէր»: Եւ ապա ասեն ժողովուրդն, Տէր ողորմեա», ևլն:

նութիւններէ քնարական տարրը սրոշում է նրանց ոգին: Դրանք յօրինուած են նոյն իսկ ս. Դրրի բառերով:

Այդպէս է եղել հոգեւոր երգի ծագումն ու վիճակն ընդհանուր եկեղեցու մէջ այն ժամանակ, երբ լինում է հայոց գրերի գիւտը և հիմք է դրւում մեր գրականութեան:

\*  
\* \*

Դժբախտաբար մեր հոգեւոր երգերի հեղինակները մեծ մասամբ անյայտ են. մենք չգիտենք, թէ մեր ո՞ր շարականն ո՞ւմ ձեռով և ե՞րբ է գրուած: Նարայաններէ մեծ մասն անանուն են: Սակաւաթիւ ծանօթութիւններն այդ մասին կամ 13-րդ դարուց են գալիս, կամ շարականոցների մէջ դրուած տեղեկութիւններն են, որոնք նոյնպէս հին չեն, որովհետեւ մենք շարականոցի շատ հին ձեռագիր չունինք: Այս ծանօթութիւններն էլ սակայն շատ քիչ բան են տալիս, որովհետեւ յաճախ տատանուում են. միւսնոյն շարականը մի տեղ մէկին է վերագրուում, մի ուրիշ տեղ մի ուրիշին: Աւանդութեան հաստատուն լինելու գէպը ում էլ շատ բան չէ որ իմանում ենք. որովհետեւ, ճիշտ ասած, այս կամ այն յայտնի անձի անուան հետ կապուած են մի շարք երգեր, որոնք բոլորը չեն կարող մի հեղինակի գործ լինել: Սրինակ՝ ս. Սահակ Պարթևին վերագրւում են Աւագ շաբաթի կանոնները, իսկ ս. Մեսրոպին Ապաշխարութեան կարգը. բայց այդ կանոններից ոչ մէկը և ոչ միւսը չեն կարող ամբողջապէս մի մարդու ասած լինել. նրանց երգերի մէջ մեծ տարբերութիւն կայ ձևի և բանաստեղծական ըմբռնման, բայց որ գլխաւորն է՝ յունաց մէջ անգամ կանոնները պատկանում են եկեղեցական բանաստեղծութեան զարգացման աւելի ուշ շրջանի: Կը նշանակէ այդ կանոնների բազմաթիւ շարականները հետզհետէ են յօրինուած և յետագայում, երբ կադմուած են կանոնները, վերագրուած են մի անձի, ս. Սահակին կամ ս. Մեսրոպին:

Անշուշտ աւանդութիւններն, ինչքան էլ ուշ ժամանակի լինին, կարող են յաճախ և որոշ պատմական հիմք ունենալ, և կարելի է հարկաւ մասամբ պարզել, թէ ո՞րն է այդ աւանդութիւնների հիմքը և որո՞ւ կարելի է հաւանական կամ ընդունելի համարել, կամ մերժել. ուրիշ խօսքով, մասամբ որոշել մեր հին շարականների հեղինակները. բայց այդ գեռ եղած չէ և այժմ հեշտ չէ անել: Նախ քան այդ հարկաւոր է հրատարակել մի նարականոց. որ պիտանի լինի գործածութեան համար—մինչև այժմ եղածները ժամերգութեան համար են

միայն սահմանաւած — որի մէջ ամփոփուին բոլոր շարականները ընթերցուածներով և իրենց մէջ ունեցած ծանօթութիւններով: <sup>1)</sup>

Մի անգամ որ մեր շարականների հեղինակներն անյայտ են մեծ մասամբ, կամ հաւաստի յայտնի չեն, ասել չի ուղիւ, որ այժմ այսպիսի վիճակի մէջ անհնար է մեր հոգևոր բանաստեղծութեան զարգացման ընթացքն ըմբռնել. այլ պզգկարելի է միայն ընդհանուր գծերով սրոշել: Մեր բանաստեղծութեան այս անասին ինքնաբոլիս չի եղել մեր մէջ. այլ ինչպէս քրիստոնէութիւնը զբօնց է եկել, նոյնպէս և նրա բանաստեղծութիւնը, որ միշտ հետեւել է զլիսաւորապէս յունաց օրհներգութեան զարգացմանը: Եւ այս հասկանալի է. 5-րդ և նոյն իսկ 6-րդ դարերում յոյն և հայ եկեղեցու մէջ առանձին խորութիւն չկար. միևնոյն վանքերում երբեմն յոյն և հայ միասին ապրում էին և ամեն մէկն իրենց լեզուներով փառաբանում Աստուծուն, ինչպէս վանապետ Ս. Թէոդոսի (+ 519 թ.) Բեթղէհէմում հիմնած վանքում: <sup>2)</sup> Բնականօրէն այսպիսի դէպքում այն նոր երգերը, որ յոյները երգում էին, հայերն ևս պիտի երգէին հայերէն թարգմանելով, կամ թէ իրենք ևս նոր երգեր պիտի յորինէին նմանելով յունաց երգերին: Յետագայում ևս հայ և յոյն եկեղեցու յարաբերութիւնը բոլորովին չի խզուում:

Թէ ուրան է ազդել յունաց օրհներգութիւնը մեր եկեղեցական բանաստեղծութեան վրայ, դժբախտաբար դեռ պարզ յատնի չէ. որովհետեւ այս ուղղութեամբ ուսումնասիրութիւններ դեռ չեն եղած: Նարականների բազմաթիւնը յունաց օրհներգութեան հետ՝ անշուշտ շատ բան կը պարզէր. շատ շարականներ անպայման նմանողութիւն կամ գուցէ ազատ թարգմանութիւն կարող են լինել: Յունաց հոգևոր քնարերգութեան և երաժշտութեան ազդեցութեանը վկայում են և մեր եկեղեցական երգ ու երաժշտութիւն. ցոյց տուող բառերը՝ սփմոս, մեսեզի, ստողոզի, մեղեդի, կանոն, տաղ ևլն: Ինչպէս յետոյ կը տեսնենք, կանոնների շարքն ևս հետեւում է յունականին: Բայց այդ՝ մեր շարականների տաղաչափութիւնն ևս, որ առանձին ուսումնասիրութեան կարօտ է, կարելի է ասել, էպիկէս նոյն է, ինչ որ յունաց օրհներգութեան տաղա-

1) Այս տեսակետով մի կարևոր աշխատանք է «Հին և նոր պարականն կամ անվտար շարականներ, լոյս ընծայեց Սահակ վարդ. Ամատունի, միաբան Մայր Աթոռոյ ու Էջմիածնի Վաղարշ. 1911 թ.

2) K. Krumbacher, Geschichte der Byzantinischen Litteratur, 1897, հր. 683.

չափութիւնը. մինչդեռ մեր սովորական տաղաչափութիւնը, որ 10-րդ դարուց ի վեր յայանի և գործածական է, աւելի մօտենում է ասորականին:

\*\*  
\*

Ե՛րբ է եղել մեր հոգևոր երգի սկիզբը:

Ինչքան էլ Շաքակնոցները ու միւս յիշատակութիւնները չեն ստուգուած, բայց և այնպէս դրանք զուրկ չպիտի համարուին պատմական հիմունքից: Այդ վիպութիւնները մեր հոգևոր երգի սկիզբը զնում են 5-րդ դարում. «Նախ ոտերն Խաչակ և ոտերն Մեորոպ ասացին զութն եղանակաւոր ձայնսն և զերկու ձայն սաեղիս: Ապա ոտերն Խաչակ՝ զՂաղարուն և զԿարպն Աւագ շաքաթուն, և ոտերն Մեորոպ՝ զԿարպն Ապաշխարութեան»: Ըստ ինքեան անհաւանական չէ, որ այդ դարում, երբ եկեղեցու պաշտամունքի լեզուն հայանում էր և ս. Գրքի սաղմոսներն ու օրհնութիւնները հայերէն էին թարգմանում ժամերգութեան ժամանակ երգելու համար, և երբ մի քանի գրական աեոակների հիմն էին դնում,— թարգմանէին նաև եկեղեցու մէջ ընդունուած նոր հոգևոր երգերը և մինչև իսկ ինքնուրոյն կամ նմանողական նոր երգեր ևս յօրինէին: Յովհան Օձնեցու վիպութեամբ <sup>1)</sup> Սահակ Պարթևն է հեղինակ գիշերային ժամի չորս քարոյնների, Յովհան Մանգակունին է յօրինել նշանաւոր Զարթուցեալքս քարոյը և նրան յաջորդող աղօթքը: Եթէ իրօք դրանք մասնակից են եղել մեր ժամակարգութեան կազմութեանը, հետևաբար կարելի չէ անտես անել յետագայ դարերի վիպութիւնը, որով ս. Սահակն ու Մեորոպը և Յովհան Մանգակունին զրուում են իրրեւ առաջին հոգևոր երգիչներ: Ի հարկէ այժմ, ինչպէս վերևում նկատեցի, մենք չենք կարող ասել, թէ նրանք երգեր յօրինել են և ո՞ր երգերը. բայց կարելի է այն գոնէ ընդունել, որ մեր հոգևոր գրականութեան հետ սկիզբն է առել նաև մեր հոգևոր երգը:

\*  
\* \*

Մեր հոգևոր երգի սկիզբը 5-րդ դարում զնելով հանդերձ՝ անհաւանական է կարծել, թէ այդ դարում մեծ օրհներգութիւններ գրուած լինին. յունաց մէջ անգամ այդպիսի երգերը ծաղկում են առանձնապէս 6-րդ և 7-րդ դարերում:

<sup>1)</sup> Յովհաննու Իմաստասիրի Օձնեցոյ մատենագրութիւն Վենետիկ, 1833, եր. 28, 31 և ին.

Բայց մենք կարող ենք ասել, որ 6-րդ դարի վերջերում մեր եկեղեցական քնարերգութիւնը պիտի բաւական զօրեղացած լինէր, քանի որ 7-րդ դարի առաջին քառորդում Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալքի» մէջ<sup>1)</sup> մեր հոգեւոր երգը բաւական մեծ հատարելութեան է հասած իր ձևով. դրա համար պէտք է ընդունել, որ մեր եկեղեցական բանաստեղծութեան ծաղկման մի նախապատրաստական շրջան եղած պիտի լինէր և տէրունական տօների համար արդէն երգեր յօրինուած պիտի լինէին նախ քան Հռիփսիմեանց «Անձինքի» նման մի մեծ քերթուածի երևան գալը: Այս քերթուածն էլ հարկաւ մենակ չպիտի լինէր իր տեսակի մէջ:

Մի ուրիշ, թէպէտ դարձեալ յետագայ դարերի, վկայութիւնից էլ երևում է, որ շարականներն առանձնապէս բազմացած են լինում 7-րդ դարում, մինչ որ իբր անհրաժեշտութիւն է առաջ դալիս նրանց խմբագրութեամբ պարապելու: Կիրակոս Գանձակեցին գրում է, թէ ներսէս Նինոյի ժամանակ այնքան «բազմացեալ էին երգք շարականաց յեկեղեցին Հայոց, մինչ ոչ գիտէլ միոյ դաւառի երգեցող՝ զմիւսոյն»: Սէ նա պատմում է, թէ մի անգամ կաթողիկոսը Վարդափառի տօնին աշխարհաժողով բազմութեամբ Բագուանում է լինում, և «ասացին շարական Վարդափառի հարցինն, և միւս դասն ոչ կարաց լիովել զնա, և լիովեցին բազում շարականս և ոչ զայն ևս գիտէին: Ապա հայրապետն ներսէս հաւանութեամբ ամենայն ժողովոյն ընտրեցին զպիտանին և զօգտակարն. զի յամենայն յեկեղեցիս յամենայն աւուր մի պաշտօն լիցի ըստ աւուրն խորհրդոյ. և ընտրեցին արս խմաստունս, զի շրջիցին ընդ ամենայն աշխարհս Հայոց և զնոյն կարգաւորութիւն հաստատեսցին, որ է մինչև ցայսօր»: Նոյնը պատմում է համառօտ և Վարդան Բարձրբերդցին<sup>2)</sup>, աւելացնելով թէ ընտրութիւնը լինում է «ի ձեռն որբոյն Բարսղի՝ մականունն ձոն կոչեցելոյ, որ էր առաջնորդ սուրբ ուխտին, որ Դպրափանք կոչի ի դաւառին Անւոյ... վասն որոյ ձոնընտիր շարականն, որ այժմ պաշտի յեկեղեցիս Հայոց»:

Վարդանի ու Կիրակոսի այս պատմութիւնը մի վկայութիւն է միայն նրա համար, որ մեր հոգեւոր բանաստեղծութեան ծաղկելուն նպաստել է առանձնապէս այն, որ դարեր շարունակ մեր եկեղեցիներում միատեսակ ժամերգութիւն և կա-

1) Ես այս շարականը հաւատի Կոմիտաս կաթողիկոսի յօրինածն եմ համարում:

2) Տիեզերական պատմութիւն, Մոսկվա. եր. 96.

նոնական պարտադիր երգեր չեն եղել, և թէ փորձեր են եղել շարականները մէջ ընտրութիւն անելու ու միատեսակութեան վերածելու ժամերգութիւնն այդ նկատմամբ: Որ վարդանի ու Կիրակոսի ժամանակ այդ միատեսակութիւնն արդէն հաստատուած է եղել, այդ պարզ է. բայց որ «ճոնընտիր» շարականը՝ 7-րդ դարում կազմուած լինի, այդ կարելի չէ ընդունել: 1) Նոր հոգեւոր երգերի մուտքը ժամերգութեան մէջ՝ յետագայ դարերում էլ դեռ ազատ է մնացել և եկեղեցիներում մի և նոյն երգերը չեն երգել:

Այս աղատութեան մի մեծ վկայութիւն ունինք Յովհան Օճնեցուց (կաթողիկոս 718—728): Նա հոգում է ոչ թէ նոր երգերի միատեսակութեան համար, այլ ս. Գրքի սաղմոսների ու օրհնութիւնների: Նա իր Ատենաբանութեան երկրորդ հատուածի մէջ, որի վերնագիրն է՝ «Ամբաստանութիւն զնոցանէ, որք այլաձևապէս և ոչ միով օրինակաւ կատարեն զհանոնս և զկրօնս և զկարգեալ զպաշտամունս», գրում է. «Քանզի տեսանեմ ի յոլովադոյն և ի ծանր իրս անկարգութիւն բազմացեալ, ոչ միայն ի ժողովրդականս, այլ առաւել յուխտի մանկունս և յառաջնորդս եկեղեցեաց: Որք մին լեզու ի ձեռն միոյ քարոզի ի մի՛ ելաք ճշմարտութեան ճանապարհ, և արդ բազմահեռք և բազմաշաւիղք եղաք, յանչափաբար և զանազան և այլաձևսն առնելոյ՝ թէ զվարս և եթէ զփառարանութիւնսն որ առ Աստուծ: Մինչ գրե՛թէ զնոյն կրել զմնասք ըստ հնոյ պատմութեանն՝ պատերազմել մեզ այր ընդ եղբօր, և այր ընդ ընկերի, քաղաք ընդ բաղաքի և օրէնք ընդ օրէնս: Երկրական զբօսանօքն և վաճառանացն տուրևառութեամբք խօսակիցք և հաշուակիցք իրերաց լինելով, և առ խաղաղութեանն Աստուծ ժողովեալք՝ զխաղաղութիւնն խնդրել՝ խուճապիմք և խռովիմք: Եւ իբրև այլազգիք՝ տանիմք և բերեմք զմիմեանս, լինելով սա նմա խուժ և այլք այլոց դուժ» (եր. 4 հտ.):

Դժբախտաբար այս Ատենաբանութեան ժ. գլխի վերջը և ժԱ. ժԲ. ժԳ. գլուխներն ու ժԴ. գլխի սկիզբը պակասում են. բայց եղածից պարզ երևում է, թէ ինչ խառնաշփոթութիւն է իշխելիս եղել նրա օրով Հայոց եկեղեցիներում աստ-

1) Հաւանական է կարծել, որ Կիրակոսն ու Վարդանը, որոնց երկօր արդիւրն անպայման մէկ է, մի պատմական շփոթութիւն են բովանդակում. դէպքը երևի 12-րդ դարուց, Ներսէս Չնորհալուց և իր ժամանակակից «ամենագոյնի» և «աստուածաշնորհ» Բարսեղ վարդապետից (+ 1162 թ.) փոխած է 7-րդ դարը Ներսէս Չինդի ժամանակը:

ուած պաշտութեան ժամանակ: Ուրիշ տեղ էլ, Կանոնների մէջ (եր. 28), գրում է, թէ «Արժան է զառաւաւտինսն՝ (առաւօթեան աղօթքը) ամենեցուն նմանս միմեանց և զնոյն և ըստ նմին կարգի կատարել. զի այսպէս վայելէ քրիստոսասիրաց, որ նորին լեզուոյ և ազգի են, միաբանութեամբ փառաւորել զԱստուած և յօրինել զվարս ուղիղս» . . . Եւ Յովհան Իմաստասէր Կաթողիկոսի ըստը ջանքն այն է, որ մի քանի եկեղեցական ծէոթերի ու ժամերգութեան մէջ միատեսակութիւն հաստատուի:

Ինչպէս երևում է, նրա Կանոնները հասնում են իրենց նպատակին, ինչ որ ժամակարգութեանն են վերաբերում. որովհետեւ այնտեղ գրուած սաղմոսները, օրհնութիւնները, կցուրդները, քարոզները, աղօթքներն ու մաղթանքները գրանւում ենք Խոսրով Անձեաացու վերևում յիշուած ժամակարգութեան Մեկնութեան մէջ, բոլորը և նոյն կարգով. փոփոխութիւնը եղել է միայն ընդարձակուելով:

\*  
\* \*

Օձնեցին սակայն, որ այնքան հոգում է ժամակարգութեան միակերպութեան համար, ոչ իր Ատենաբանութեան, ոչ Կանոնների և Յաղագս կարգաց եկեղեցւոյ գրուածքի մէջ չի խօսում նոր երգերի կարգաւորութեան և միակերպութեան մասին, այլ միայն ս. Դրբից առածների և ընդհանուր եկեղեցւոյ ընդունուածների, ինչպէս և քարոզների ևլն. համար: Որ նա նոր երգերի մասին չի խօսում, դրանից կարելի չէ եզրակացնել, թէ իբր նրա օրով չեն եղել հոգևոր երգեր կամ սաղմոսների նմանողութիւններ, և իբր նրան այդպիսիք ծանօթ չեն եղել: <sup>1)</sup> Նա այդ երգերի մասին չի խօսում, որովհետեւ դրանց երգեցողութիւնն ազատ է եղել և նա միտք չի ունեցել դրանք կարգաւորել, այլ աղօթքները, քարոզներն ու հին հոգևոր երգերը: Ատենաբանութեան մէջ (եր. 12 հտ.) նա խօսում է այն մասին, թէ թէպէտ և մենք հայերս քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան տօները միասին մի և նոյն օրն ենք կատարում, քայց ոմանք աստուածաշնորհութեան ժամանակ միայն Ծննդեան տօնն են սիրում կատարել. «իսկ յայտնութեանն խորհրդոյ՝ և ոչ միով իւր կամին ճառս ի մէջ բերել»: Իմաստասէր կաթողիկոսն այդպէս վարուողները դէմ

<sup>1)</sup> N. Ter Mikaëlian, Das Armenische Hymnarium, եր. 61 հտ.

ի միջի այլոց հեղեղեալ առարկութիւնն է բերում. եթէ այդպէս լինէր, առում է նա, այն ժամանակ «էր աղաղաւ և կցուրդս գեղեցկանուադս զմկրտութեանն բանից յօրինեցին երանելիքն մեր վարդապետք»:

Դժբախտաբար Յնեցին չի յայտնում, թէ ով են այդ երանելի վարդապետները. նրանք անշուշտ ոչ ժամանակակիցներ են եղել և ոչ մօտիկ ժամանակներում ապրածներ, քանի որ նրանց հեղինակութիւնը պարտաւոր էին ընդունել նաև Յնեցու պէս չմտածողները, որոնք չէին ուզում միջոցառութեան տօնի յիշատակութիւն անել և ջրօրհնէր կատարել հակառակ նախնական վաղնջուց սովորութեան. «Այլ զոր ասեմս, այս նախնական սովորութիւն ի վաղնջուց հետէ նախահաւալ և մինչև առ մեզ հասեալ... օրհնէին զջուրն, ձէթ արկանելով ի նա: Եւ իբրև զըռփիչ ակտից հոգւոյ և մարմնոյ՝ ամենեքեան անդուստ վայելեալք, ցնծալից լինէին. որ և այժմ ոչ է ամենեկին խափանեալ, թէպէտ և խանդարիչն Խորայեղի ազօր և կնատ զօրութեամբն նկրտի խափանել»:

Այդ «երանելի վարդապետներ», որ «զմիջոցութեանն քանից», — որ են Աւետարանի մէջ միջոցութեան վերաբերեալ խօսքերը, — գեղեցկանուադ կցուրդներ էին յօրինած, հարկաւ, Աւետարանի խօսքերի յարասութեամբ, ինչպէս են ըստ հին հոգևոր երգերը, — անշուշտ միայն այդ արած չէին լինիլ. նրանք կցուրդներ յօրինուած պիտի լինէին նաև Ծննդեան և միւս տէրունական տօների համար: Թէոդորոս Քոթենաւորի, իրեն Յովհան Իմաստասէրի ուսուցչի, ճառերից<sup>1)</sup> իմանում ենք, որ երգեր եղել են և ուս. Աստուածածնի վրայ: Նա Քրիստոսի Ծննդեան օրն Աստուածածնի գովեստն անելով՝ ասում է. «Զմարիամ կոյս Աստուածածին համարողորայսակեալ հաւատով օրբոյ Երրօրդութեանն, ընդհանրական առաքելաչէն եկեղեցիք Քրիստոսի, փառատրոդական երգաբանութեամբ հոգեպարծնութեամբ՝ վերագոչեսցուք ի սերկեան աւուրս դասակարգութեամբ. վասն զի յայտմ աւուրն նկալան մեծարգոյ աւետիքն ըստրաքնակ տիեզերք: Քանզի Հօր հաւասար Բանն Աստուած... Ժնաւ այսօր ի Բէթղէէմ»: Եթէ չլինէին Աստուածածնի վրայ երգեր, նա իր ունկնդիրներին չէր հրաւիրիլ «երգաքանութեամբ, «նուագարանօր» փառաւորելու նրան: Եւ ինքն իսկ Քերթողն իր «Գովեստի» մէջ շարականի նման մի ներբող է յօրինում Քրիստոսի Ծննդեան վրայ.

1) Տպուած է Յովհան Յնեցու Մատենադրութեան ետևում:

Այսօր ցնծան քիրկրական կցրդիւք

Եւ զեղազանաւ պարանկոյնութեամբ

Երկնայինք եւ երկրայինք...

Գալստեամբ Արդոյն Աստուծոյ:

...Այսօր ամպք աստուածայինք

Եւ ցօզք ճգէզուարճք:

Վերաբերեալ բուսովք

Ստորացոյին ի մարդիկ

Գալստեամբ Արդոյն Աստուծոյ: Եւ ին:

Մենք ճառերի յարաբերութիւնը շարականների հետ՝ յետոյ կը տեսնենք: Այստեղ Թէոդորոսի այս երգարանութեան առաջին տան հետ բաղդատելու համար՝ դնենք միայն ս. Աստուածածնի Ծննդեան կանոնի մի շարականի առաջին տունը:

Այսօր ցնծան երկնայինքն

Եւ պար առեալ ի բարեւոյնս

Երգեն զերգս հոգեւորս

Յաւուր ծննդեան Սրբուհւոյ:

\* \*

Ինչ որ Թէոդորոսի «Գովեստի» մէջ կցուրդ է կոչուում, նոյնը շարականի մէջ, ինչպէս վերեւի վկայութիւններից կարելի է տեսնել, ասուում է հոգեւոր երգ, որ մեր մատենագրութեան մէջ յաճախ յիշոււմ է սաղմոսների և օրհնութիւնների հետ: «Հոգեւոր երգ» կոչոււմն հարկաւ ընդհանուր նշանակութիւն ունի, թէ հին, ս. Գրքի երգերին կը յարմարուի և թէ նոր եկեղեցական երգերին. իսկ «կցուրդ» կոչուել են առանձնապէս նոր հոգեւոր երգերը:

Թէ կցուրդ բառը երգ է նշանակում և հնումն այդպէս, և ոչ շարական բառով, կոչուել են նոր եկեղեցական, ոչ ս. Գրքի, երգերը, այդ երեւում է շատ տեղերից: Բացի վերեւում գրածներից կարելի է և ուրիշ վկայութիւններ ևս բերել: Յովհանն իմաստասէրն, օրինակ, Կանոնների մէջ, եր. 27. Ժ. գրում է. «Արժան է շաբաթն օր երեկունն մարտիրոսաց պաշտել... և զհրազացն օրհնութիւն ասել՝ Լոյս զուարթ սուրբ»: Իսկ Ատենաբանութեան մէջ (եր. 22) Ժ. գլխի մէջ, որի վերնագիրն է՝ «Թէ զինչ խորհուրդ և յերեկոյն պաշտամանն գտանիցի ի սաղմոսս և ի կցուրդս և յաղթս և ի նոցին կարգադրութիւն», աւելի մանրամասն խօսելով գրում է, թէ սաղմոսներից յետոյ (որոնք են՝ Իոնարհեցի և Ապրեցի. տես եր.

29. ԻՔ) «զննագացն նուազ են զկցուրդ», որ է նոյն «Լոյս զուարթ» երգը: Ուրեմն այս նոր եկեղեցական հռչակաւոր երգը, որ Աստուածաշնչի երգ չէ, մի տեղ օրհնութիւն է կոչուում, մի ուրիշ տեղ՝ կցուրդ: Խօսելով «ս. Աստուած» աղօթքի մասին, Օձնեցին յաճախ յիշեցնում է՝ «զերեքսրբեանն երգել զփառաբանութիւն հանդերձ սրբոյ Աստուածածնին կցրդիւն».  
«Զսուրբ Աստուածն՝ հանդերձ սրբոյ Աստուածածնին կցրդիւն ի վերջն անցուցանել» (եր. 29 հտ.). իսկ այդ կցուրդն է՝ «Փառաւորեալ և օրհնեալ միշտ Ա. Կոյս»-ը, ելն: «Կցուրդ» բառի մի ուրիշ ձևն է «կցորդ». Հայկազեան Բառգրքի մէջ այս ձևով վիհայութիւն է բերած Ոսկեբերանից՝ «Յօրինեալ բարբառովք՝ ազգի ազգի կցորդիւք (յուսն. տաղիւք կամ մեղեդեօք)».  
Նոյնպէս և Փարպեցուց. «Սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս»: Կարելի չէ Փարպեցու «կցորդս ասելը» հասկանալ «կցորդ սաղմոս» ասելու համար. քանի որ սաղմոսել բառի հետ է դրուած, իսկ կցորդ սաղմոս ասելն ևս սաղմոսել է: Դա նոր երգերի համար է գործածուած:

Ինչո՞ւ են նոր երգերը կցուրդ կոչուելի—Շատ պարզ պատճառով: Դրանք, ինչպէս վերևում յիշատակեցի, սկզբում եղել են փոքրիկ երգեր և իբրև յաւելուած ասուել, կցուել են, ս. գրքի սաղմոսներից կամ օրհնութիւններից յետոյ: Սկզբնական շրջանում և յետոյ էլ երկար դարեր ժամերգութեան մէջ իշխողն եղել է ս. Գրքի սաղմոսն ու օրհներգութիւնը. մինչդեռ կցուրդներն անկախ բնաւորութեամբ երգեր չեն եղել, այլ ս. Գրքի երգերի մի լոկ յարասութիւն, կամ յարասութիւն օրուայ տօնի խորհրդի յիշատակութեամբ: Այս յարասական երգերի մասին, որոնք ունին հնութեան դրոշմ, յետոյ առանձին կը խօսենք: Այստեղ հարկաւոր է նկատել, որ կցուրդ, յետագայում կցորդ ձևով, կոչուել են նաև սաղմոսներից կաղմուած հատուածները, ոչ ամբողջական սաղմոսները, այլ սաղմոսներից առած որոշ թուով տներ, կամ ինչպէս Բառգրքում բացատրուած է՝ «տուն մի սաղմոսի ի խորհուրդ աւուրն, որում կցի և սկիզբն նորին զկնի».  
Բայց այս գէպքում կցուրդ բառը այնպէս է գործածուում, որ սաղմոսի կցուրդ է հասկացուում<sup>1)</sup>: Այսպէս կոչուել են այդ սաղմոսները, որովհետև դրանք էլ մի տեսակ նոր կաղմուած

1) Այսպէս՝ Յովհան Օձնեցին՝ եր. 12 «սաղմոս. կցուրդ ասելով» եր. 121. «սաղմոսին կցրդիւ».—եր. 123. «սաղմոսն կցրդիւն՝ Տէր սիրեցի. եր. 28. «զկցուրդսն զոր առեալ է ի սաղմոսացն»: Ելն: Տօնացոյցի մէջ նոյնը կոչուած է Կցորդ սաղմոս. աճս եր. 311. 395. 216, 226, 416. Ելն:

երգեր են եղել, սաղմոսից տներ միայն, երբեմն տան կէսն առած, և տները յետ ու առաջ շուռ տուած, և դարձեալ իբրև յաւելուած ասուել են ուրիշ երգերից յետոյ:

Այս կցուրդ սաղմոսների և միւս կցուրդների, այսինքն նոր հոգևոր երգերի տարբերութիւնը սկզբնապէս մեծ չէ եղել. երկուսն էլ սկզբնապէս նոյնն են. ուստի նոյն անունով և կոչուել են: Կցուրդ սաղմոսները նոր հոգևոր երգերի առաջին սաղմն են միայն: Այն ժամանակ, երբ եկեղեցում ո. Գրքի սաղմոսներն ու օրհնութիւններն էին միայն երգում, և ոչ նոր երգեր, նոր երգերի պահանջին բաւականութիւն է տրուել միայն կցուրդ սաղմոսներով. աղօթողը երկիւղածութեամբ լերարեբերով ս. Գրքի ընադրին՝ իրենից ոչ մի բառ չաւելացնելով սաղմոսի ընադրի մէջ, բաւականացել է միայն նրանով, որ տների մէջ ընտրութիւն է արել և առել այնպիսի տներ և նոյն իսկ տան այնպիսի հատուածներ, որոնց բովանդակութիւնը յարմար է համարել օրուայ խորհրդին և տօնի ընաւորութեանը:

Կլուրդ սաղմոսների մի երկրորդ, աւելի բարձր աստիճանն են միայն այն կցուրդները, որոնք յօրինուած են գրեթէ ամբողջապէս ս. գրքի այն հոգևոր երգերի բառերով, որոնց ետևից կից երգուում են, բայց ոչ անփոփոխ պահելով ս. գրքի երգի ընադիրը, այլ նորից խմբագրելով այն:

1. Ինձ օղնութիւն ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլին եկեսցէ:

2. Եւ որ պահեն զԻսրայէլ աջովն իւրով:

Ինձ օղնութիւն ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլին եկեսցէ:

3. Զի նա է տէր տերանց եւ Աստուած յաւիտենից,

Ինձ օղնութիւն ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլին եկեսցէ:

Ապաշխարութեան կարգի այս շարականը, որ առում է երեկոյեան՝ «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն: Սգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ» ևլն սաղմոսից յետոյ, պարզապէս նոյն սաղմոսի յարասութիւնն է: Բայց այս շարականը մենակ չէ. մեր շարականների մէջ շատ շատերն այսպիսի յարասութեամբ են յօրինուած, ինչպէս յետոյ կը տեսնենք:

Սրանցից դարձեալ մի աստիճան միայն հեռանում են այն շարականները, որոնց հեղինակները մի փոքր ազատ են շարուում. նրանք պահելով ս. Գրքի օրհնութեան կամ սաղմոսի մի տող կամ մի խօսք իբրև կրկնակ՝ մնացածն իրենցից են յօրին-

նուժ, միայն տեղ տեղ դարձեալ յարասութիւն անելով Ա. գրքի այն երգին, որի կցուրդն է նոր երգը: Եւ վերջապէս կցուրդ սաղմոսների հախառակ ծայրում, առտիճանաբար հեռանալով նրանցից, կանգնած են այն շարականները որոնք ս. գրքի հոգևոր երգից անկախ յօրինուածք ունին, թէպէտ դարձեալ միշտ ս. Գրքի առացուածքներով ու պատկերներով մտածուած: Բայց այս տեսակի շարականներն արդէն յօրինուած են ոչ իբրեւ ս. Գրքի երգի կցուրդ, այլ իբրեւ բոլորովին անկախ տօնական երգեր, ինչպէս է, օրինակ, Հռիփսիմեանց «Անձինքը», որի հեղինակը երգի մէջ հենց հրաւիրում է. «Տօնեոցուք սառագութեամբ ի հնձանս նոցունց... Յնձութեամբ տօնեսցուք զյիշատակս նոցունց»:

Ինձ թւում է, թէ այսպիսի մեծ տօնախմբական երգերը կոչուել են կացուրդ, որ յետագայում, հնչիւնական նմանութեան պատճառով, շիոթուել է կցուրդ բառի հետ և գործածուել նրա տեղ: «Կացուրդ» բառը բառգրքում բացատրուած է նախ՝ իբրեւ «հանդէս տեսարանաց և տօնից, համախմբութիւն... տօնախմբութիւն». այսպէս յաճախ գործածուած յունարէնից, աւելի յունաբանական հին թարգմանութիւնների մէջ, յունարէնի πανήγυρις բառի փոխանակ. ապա՝ «երգն ի կացուրդս», այսինքն նուազ երգոց ի տօնս տօնս»: Այսպէս, ի միջի այլոց, 12-րդ դարում, Սարգիս վարդապետի, Ներսէս Շնորհալու դառակցի, գրուածքներում՝ «տօնախմբութեամբ և հանդիսաւոր կացրդիւք». նոյնպէս և Գրիգոր Անաւորդեցու Յայտնաւորքում՝ «երգեաց կացուրդ Ծննդեան Քրիստոսի քաղցրաձայն եղանակաւ». «երգեաց ի Տէրունական տօնս կացուրդս հազար» ևլն. այլ և տաղարանների ու գանձարանների մէջ՝ «կացուրդ Յովհաննու Կարապետի», «կացուրդ սրբոց քառասնից», «կացուրդ Ղազարու յարութեան», ևլն:

Մ. Արեղեան.

(Վերջը միւս անգամ)